

- 20 Թաղադաւ այսպիսի հանձարոյն զարդու
Անդէն առ նըմին պատիւ ընկալնու,
Ի մեծամեծաց ի գիտնոց դասու
Եւ առ հասարակ ի ռամկաց պարու:
- 21 Իրբ անուն Սարգսի գովեստ ըստացաւ,
Օր քան զօր յաւէտ հռչակն յորդեցաւ,
Սակայն առաւել նոյն բարի համբաւ
Ըզկեսարացիս հապճեպ շահեցաւ:
- 22 Զայնու պահօք իսկ լուր տարածեցաւ,
Ապա ճշմարիտ պատգամ ծանուցաւ,
Թէ կեսարիոյ առաջնորդն հանգեաւ
Հայ եկեղեցին անդր այրիացաւ:
- 23 Թայնժամ կեսարեան ժողով որ գըտաւ,
Ի Բիւղանդիայ շէն քաջահամբաւ
Իւր քաղաքակցաց շարժիչ պատգամաւ
Եկն առ Յօհաննէս Պատրիարք գնդաւ:
- 24 Թորմէ Սարգիս մեր վարդապետն լաւ
Յելելոց անդրր աղերսիւ բաղմաւ
Կարի ստիպմամբ մեծ աղաղակաւ
Յառաջնորդութիւն իւրեանց խնդրեցաւ:
- 25 Այլ մեծն Յօհաննէս իմ հոգեւոր հաւ
Պարապեալ գոլով բղբաղմամբ ամբաւ
Կարգեալ էր բզնա փոխան իւր կամաւ
Ի քարոզել անդ բանիւ ճարտարաւ:
- 26 Ուստի բացասէր որոշեալ բանիւ
Ողջ կեսարացի Հայոց բաղմաթիւ,
Թայտնելով նոցա բղկամն իւր փաստիւ
Ընտրեցէք ասէր ձեզ զայլ ի հովիւ: